Հավելված

,,Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարան,, ՊՈԱԿ

ռեկտորի

,,____,,_____2014թ.

թիվ

_____հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

I. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մրցույթի նպատակն է համալսարանի հետազոտական ներուժն ուղղորդել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առավել հրատապ հետազոտական ծրագրերի իրականացմանը, վերջիններս փոխկապակցել կրթական ծրագրերի հետ, իսկ ստացված արդյունքները առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և շահակից կազմակերպություններին:

2. Մրցութային կարգով իրականացվող հետազոտական թեմաներին առաջադրվում են հետևյալ խնդիրները.

1) նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առավել կարևոր հիմնահարցերի գիտականորեն հիմնավորված լուծմանը,

2) առաջարկություններ մշակել Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի բարելավման և գործարարության ակտիվացման նպատակով,

3) ստեղծել նախադրյալներ հետազոտության արդյունքների առևտրայնացման և արտաքին պատվերների ինստիտուտի զարգացման համար,

4) փոխկապակցել համալսարանի ուսումնական և հետազոտական գործունեությունը, ընդլայնել երիտասարդ հետազոտողների ներգրավվածությունը:

II. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Մրցույթի պայմաններին և տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան ներկայացնել մասնակցության հայտ (ձև N1):

4. Խմբի ղեկավարը և անդամները պետք է լինեն համալսարանի աշխատողներ և ուսանողներ:

5. Խմբի անդամների թիվը, ըստ հետազոտական թեմաների առանձնահատկության, որոշում է խմբի ղեկավարը, բայց չպետք է գերազանցի մրցույթի պայմաններով նշված հաստիքային միավորից:

6. Խմբի անդամները (ներառյալ՝ Ղեկավարը և Խորհրդատուն) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

7. Խմբում կարող է ընդգրկվել ասպիրանտ և/կամ մագիստրատուրայի ուսանող:

8. Խմբում չեն կարող ընդգրկվել գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում «ՀՊՏՀ-ի ներքին դրամաշնորհների», ինչպես նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործող հետազոտական թեմաների ղեկավարներն ու կատարողները:

III. ՀԱՅՏԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

9. Հայտը ներկայացնել համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ գրանցվելով «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հասցեում՝ info@amberd.am, մինչև 2014 թվականի մարտի 28-ը ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 18:00):

10. Հայտը ներկայացնել գիտական թեմայի տեսքով՝ սույն հրավերի (Ձև 1) նշված ձևաթղթերին համապատասխան:

11. Հայտի տեքստային մասը ներկայացնել 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով, էջերի բոլոր կողմերից թողնել 2.5 սմ լուսանցք:

IV. ՀԱՅՏԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

12. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են՝ համապատասխան մասնագետների գրավոր կարծիք ստանալու և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի Խորհրդատվական խորհրդին ֆինանսավորման երաշխավորելու համար:

13. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է Հայտի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը գիտական թեման իրականացնելու համար, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ֆինանսական արդյունավետությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

14. Գիտական փորձաքննություն իրականացնող մասնագետը(ները) կարծիքին կից ներկայացնում են գնահատման թերթիկ (ձև N2), որտեղ 13 կետում նշված յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ), հետևյալ սանդղակով.

1) *0 միավոր* – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

2) *1 միավոր* – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

3) *2 միավոր* – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

4) *3 միավոր* – հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են,

5) *4 միավոր* – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

6) *5 միավոր* – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին, և թերություններն աննշան են:

15. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի Խորհրդի կողմից, որը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 17 տոկոսը:

16. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

17. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

18. Գիտական փորձաքննությունը կազմակերպող և իրականացնող անձանց կողմից Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն արգելվում է:

19. Խորհուրդը համալսարանի ռեկտորին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

20. Համալսարանի ռեկտորը, ելնելով համալսարանի բյուջեից գիտական հետազոտությունների (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Ռեկտորը հաստատում է գիտական թեմաների ցանկն ու դրանց ղեկավարների ցուցակը՝ նշելով

յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:

Ձև N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ,,ԱՄԲԵՐԴ,, ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2014 թ.

Ծածկագիր՝ _____

(լրացվում է հանձման ժամանակ)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

_____

2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն)

_____

3. Հայտի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը
   _____

4. Ծննդյան տարեթիվը _____

5. Գիտական աստիճանը _____

6. Պաշտոնը _____

7. Հեռախոսը _____

8. Էլեկտրոնային հասցեն _____

9. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____

10. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը_____

11. Աշխատանքի վարձատրության (ներառյալ գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները) գումարը _____ հազար ՀՀ դրամ

12. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար ՀՀ դրամ

13. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար ՀՀ դրամ

14. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

15. Համալսարանի ,,Ամբերդ,, հասարակական կազմակերպության տնօրենի ստորագրությունը _____

,,____,, _____ 2014թ. Կ.Տ.

I. ԹԵՄԱՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ (1- 2 էջ)

II. ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (8-10 էջ)

III. ԹԵՄԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1-2 էջ)

IV. ԹԵՄԱՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

h/h	Հետազոտության ընթացիկ և ավարտական փուլերի աշխատանքները	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը

V. ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿ

Հ/h	Պաշտոնի անվանում	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ (հազար ՀՀ դրամ)	Հաստիքների քանակ	Ընդհանուր աշխատավարձ (հազար ՀՀ դրամ)
1.				
2.				

VI. ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/h	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալները (հազար ՀՀ դրամ)
1.	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ	
2.	Տնտեսական ծախսեր	

3.	Այլ ծախսեր, այդ թվում՝ ա) բ) նյութեր և միջոցներ, գ) գործուղումներ, դ) արշավախմբեր, -------	
4.	Ընդամենը	

Թեմայի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

,,____,, _____ 2014 թ.

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1.Ազգանուն, անուն, հայրանուն

_____

2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը

_____

3. Կրթությունը (բուհը, մասնագիտությունը) _____

4. Գիտական աստիճանը

_____

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

_____

6. Հրատարակված է

- գիտական հոդվածներ (թիվը)
- մենագրություններ (թիվը)
- արտոնագրեր (թիվը)

7. Վերջին հինգ տարվա հրապարակումների ցանկը (նշել վերնագիրը, հրատարակման տեղը, տարեթիվը, էջերը, համահեղինակները)

_____

8. Ստացված դրամաշնորհները

_____

«____» _____ 2014 թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՄԱՅԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

[1]Էրացվում է յուրաքանչյուր կատարողի համար

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը և ծննդավայրը	
Կրթությունը (բուհը, մասնագիտությունը)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը	
Աշխատանքի վայրը և պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքի, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նշել թեմային առնչվող մինչև 5 հրապարակման վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, էջերը	
1. 2. 3.	

Ռեկտոր Կ.ԱԹՈՅԱՆ

Ձև N 2

Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մրցույթին ներկայացված հետազոտության հայտի գիտական փորձաքննության գնահատման թերթիկ

1. Հայտի թեման ----------

---

2. Փորձագետի անունը, ազգանունը----------
---

3. Փորձագետի գիտական աստիճանը և կոչումը ----------

---

4. Փորձագետի աշխատանքի վայրը և պաշտոնը ----------

---

5. Թեմայի հիմնական չափանիշների գնահատման աղյուսակ (0 – 5 միավոր, 0,5 միավորի ճշտությամբ)

Հ/հ	Գնահատման չափանիշները	գնահատականը, միավոր
1.	Թեմայի արդիականությունը	
2.	Գիտատեխնիկական նորույթը	
3.	Տվյալ բնագավառում խմբի ղեկավարի գիտական ձեռքբերումները	
4.	Տվյալ բնագավառում կատարողների գիտական ձեռքբերումները	
5.	Խմբի ղեկավարի մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
6.	Խմբի կատարողների մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
7.	Ֆինանսական արդյունավետությունը	
8.	Տնտեսությունում արդյունքների	

	կիրառելիությունը	
9.	Ուսումնական գործընթացում արդյունքների կիրառելիությունը	
10.	Կատարման ժամանակացույցի հիմնավորվածությունը	
11.	Հայտի համապատասխանությունը մրցույթի պահանջներին	
12.	Նախահաշվի հիմնավորվածությունը	
	Ընդամենը միավոր (առավելագույնը 60 միավոր)	

*Գնահատվում է համալսարանի ,,Ամբերդ,, հասարակական կազմակերպության խորհրդի կողմից:

6.Փորձագետի եզրակացությունը ----------

Փորձագետի ստորագրությունը---------- ,,----,,----------

-2014 թ.

Ռեկտոր Կ.ԱԹՈՅԱՆ